

ՀԱՄԱՅՆՈՒԹԻՒՆ

Խոնարհութեան գեղեցիկ դուստրն է նագելի հնագանդութիւնը, որուն բազմապատիկ շնորհները միայն վայելողները կրճանջնան, որովհետեւ բարոյապէս ազատ կը դարձնէ մարդու կամքը, որը բանականութեան հանդէպ հնագանդութեամբ բնականօրէն ազատ ըլլալով՝ անոր հանդէպ անհնազանդութեամբ բարոյապէս դարձած է կուռքերու ծառայ եւ այս ազատութիւնը անաշխատ ստացուած թագաւորութիւն է, առանց պատերազմի յաղթութիւն: Այնտեղ կարելի է տեսնել բոլոր թշնամիներուն պարտութիւն: Հոն խաղաղութեան երփներանգ ծաղիկներ կը բուսնին, սիրոյ ու խնդութեան կենսօգուտ պտուղներ կ'աճին:

Արդարեւ, մարդկանց որդիներ, որ կը կամենաք ձեզի կցորդ ունենալ խոնարհութեան վայելչագեղ օրիորդը՝ հնագանդութիւնը, որ Աստուած կը կամենայ, փութացէ՛ք անոր ընդառաջ ելլել ու ողջագուրուիլ, առնել ու բերել ձեր սրտի սենեակը եւ իբրեւ պանծալի դշխոյ՝ բազմեցնել ձեր կամքի ու յօժարութեան գահին, որպէսզի դուք եւս, ականակուռ թագ զնելով ձեր գլխին, փառքով պսակուիք...

Հարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԱՏԱՄՆԱՑԱԻ ՀՄԱՅՈՒՄ

Իսկ ի՞նչ էր արդիւնքը: Այդ մասին կ'իմանանք շարունակութենէն. «Տղաս այնպէս դիւտեցաւ, որ զիշերը չէինք կրնար զինք առանձին ձգել: Յաճախ յարձակումներու կ'ենթարկուէր, եւ այդ պատճառով ալ լրիւ հիւծեր էր: Վախը կը համակէր զինք եւ մէկ ձայնի վրայ կը պոռար, մարդոց մէջ փրկութիւն կը փնտռէր:» Իրեն այնպէս կը թուէր, թէ մահը իր վրայ յարձակած է եւ կ'ուզէ սպաննել զինք: Սարսափելի է մտածել, թէ գաւազի ո՛րքան տանջուեցաւ»:

Կախարդութեան հետեւանքներուն մասին պիտի խօսինք նաեւ ստորեւ:

Բոլոր պարագաներուն, բնորոշ կողմը այն է՝ որ մարդս կը ձգտի որեւէ գնով առողջ ըլլալ, առանց հարցնելու՝ արդեօք Աստուծոյ կամքին համաձայն է անիկա, թէ՛ ոչ: Կ'ուզէ ազատիլ իր բռնէն՝ հիւանդութենէն: Եւ եթէ Տէրը չ'ուզեր ընել այն՝ ինչ որ մարդը իր միտքը դրեր է, կամայ թէ ակամայ՝ Սատանայի օգնութեան կը դիմէ:

Շատ յաճախ մարդիկ կը գերազրնահատեն Ֆրիդրիխ ամրութիւնը: Աստուած առաջին հերթին մեր հոգիով կը զբաղի: Անոր համար մարդոց հոգին շատ լաւ կարեւոր է, քան կեանքը: ...



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 29 ԱՊՐԻԼ, 2012 ԹԻՒ 18

ԵՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԶԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԵՍԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 5.19-30

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Յիսուս անոնց ըսաւ.- Հաստատ գիտցէ՛ք, թէ մարդու Որդին ինքն իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ գայն զրկած է:

Հաստատ գիտցէ՛ք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վաստակ եղէ՛ք, ժամանակ կու գայ-եւ արդէն իսկ եկած է- երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

Զատիկի երրորդ Կիրակին կը կոչուի Կարմիր Կիրակի: Կարմիր կոչումը բացատրող եկեղեցական որեւէ արարողութիւն գոյութիւն չունի: Կարմիր կոչումը կը մնայ անբացատրելի սակայն, հաւանաբար դարձեալ բնութեան հետ կապ ունի: Կանաչ եւ Կարմիր Կիրակիներու սովորութիւնն էր եկեղեցւոյ մէջ կանաչ եւ կարմիր գոյներու գործածութիւնը: Եկեղեցւոյ վարագոյրը, պատարագիչի զգեստը, դպիրներու շապիկները, Կիրակի օրուան համաձայն, կանաչ կամ կարմիր կ'ըլլային: Ժամանակին սովորութիւն էր նաեւ գաւառներուն եւ գիւղերուն մէջ կանաչ կամ կարմիր հագուելը:

Ոմանք Կարմիր Կիրակին նուիրած կը համարեն Յիսուսի եօթներորդ անգամ աշակերտներու երեւնալուն՝ Տիրերական ծովի ափին, Պետրոսի ուրացումին եւ քառութիւն ստանալուն, համաձայն Յիսուսի երեք հարցումներուն. «Միմոն Յովհաննու, կը սիրե՞ս զիս»: Կարմիր Կիրակիին մէջ այլաբանական բացատրութիւն, նմանութիւն գտնելն ու որոշելը դիւրին է անշուշտ: Քրիստոսի արիւնով ծաղկած Կիրակի, Քրիստոսի արիւնով հաստատուած եկեղեցի: Բայց այս ձեւով, կանաչ ու կարմիր կոչումի քրիստոնէական այլաբանական բացատրութիւնը միայն կրնանք ունենալ, առանց հասկընալու իսկական իմաստը, ազգային աւանդութիւնը:

Հեւեւաբար, Կարմիր Կիրակի օրը, Կանաչ Կիրակի օրուան ժողովրդական սովորութիւն կը տիրէ. երթալ բացօթեայ վայրեր, նոր ծաղկած բնութեան ծոցը ըլլալ:

ԱՂՕԹՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ

Ու հիմա, այսֆան յուսահատութիւններէ եւ ահարկու սրտաբեկութիւններէ, աստուածային բարկութեան պակուցիչ սաստկութիւններէ ետք, թախծութեամբ ի սպառ տագնապած, կ'աղաչեմ՝ քեզի, սուրբ Աստուածածին: Հրեշտակ՝ մարդոցմէ, մարմնատեսիլ ֆերովքէ, երկնաւոր թագուհի, անխառն՝ ինչպէս օդը, մաքուր՝ ինչպէս լոյսը, անշաղախ՝ ինչպէս բարձրացած արեւուն պատկերը, գերագանց քան անկոխելի Սրբութիւն Սրբութեանց: Ընդունէ՛ դաւանողիս այս մաղթանքն ու աղերսը, ու ասոր հետ միացնելով իմ նախկին ներքողիս իօսեբերը, իստնէ՛ քու պաղատանքներուդ: Հիւսէ՛, միացո՛ւր իմ մեղաւորի դառն մեծութիւնները քու երջանիկ ու ինկաւորուած հայցւածներուդ, ով տունկ կեանքի օրհնրւած պտուղին. որպէսզի քեզմէ միշտ օգնուած եւ բարեգործուած, քու մաքրական ծնելութեանդ ապաւինած եւ անով լուսաւորուած, ապրիմ քու Տիրոջդ եւ Զաւկիդ՝ Քրիստոսի համար:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Յարգելի ընթերցող՝ ձրագ կիրակնօրեայ շաբաթաթերթի. սոյն սիւնակին ընդմէջէն մենք ամէն շաբաթ բացատրութիւն պիտի փոխանցենք մեր եկեղեցւոյ ծիսական արարողութեան ընթացքին գործածուող առարկաներու մասին, անոնց իմաստին եւ գործածութեան նշանակութեան: Այն բոլոր առարկաները, որոնք կը տեսնենք եկեղեցւոյ մէջ՝ իմաստ ունին: Հետեւաբար մենք այբուբենի շարքով պիտի փոխանցենք ամէն շաբաթ առարկայի մը բացատրութիւնը:

ԱՄՊՀՈՎԱՆԻ

Բարձրաստիճան վիճակաւորներու յատուկ պատուոյ նշանակ է: Անոնց գլուխին վրայէն տարածուած հովանոց մը կայ, բաւական ընդարձակ եւ քառանկիւն կերպասէ պատրաստուած եւ չորս կողմերը ծոպերով շրջապատուած, գոր հորիզոնական դիրքի վերայ չորս կամ վեց ձողերով բարձրացուցած կը տանին չորս կամ վեց պատուաւոր անձեր կամ եկեղեցական սպասաւորներ՝ վիճակաւորի թափօրով քալած ատեն: Արեւելեան հայոց վիճակներուն մէջ ամպհովանիի կիրառութիւնը սովորական է ամէն վիճակաւոր եպիսկոպոսի, իսկ մեր վիճակներուն մէջ քիչ տեղ կ'երեւի այժմ անոր կիրառութիւնը վիճակաւորներու համար: Ներկայիս ամպհովանին կը գործածուի կաթողիկոսներու համար մասնաւորաբար հանդիսաւոր առիթներով:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ

Նեղութեան օրը ինձի կանչէ՛, ես քեզ պիտի ազատեմ ու դուն զիս պիտի փառաւորես: (Մաղ. 50.15):

Ասիկա իսկապէս պատուական խոստում մըն է:

Ահաւաստիկ նեղ եւ ստիպողական պարագայ մը, «նեղութեան օրը»: Այսպիսի օրուան մը կէսօրն անգամ մուտք է եւ իւրաքանչիւր անցնող ժամ նախորդէն աւելի մուտք կը թուի: Ու այս խոստումը ճիշդ այսպիսի մուտք ու ամպոտ օրուան մը համար է:

Ահաւաստիկ քաջալերիչ խրատ մը. «Ինձի կանչէ՛»: Ասիկա ընելու համար յորդորի պէտք չունիք, ասիկա մեզի բնութիւնը ըլլալու է, Անոր կանչել ամէն օր եւ օրուան որեւէ ժամուն: Ի՛նչ մեծ ողորմութիւն է Աստուծոյ կանչելու արտօնութիւնը ունենալ եւ ի՛նչ մեծ իմաստութիւն է այդ արտօնութիւնը լաւագոյնս գործածելով մեծագոյն չափով անկէ օգտուել: Ի՛նչ յիմարութիւն է «Նեղութեան օրը» մարդոց դիմել: Տէրը կը հրաւիրէ մեզ, որ մեր խնդրանքները Իրեն տանինք եւ Իր առջեւ պարզենք: Մենք պիտի ընդունինք այս հրաւէրը եւ պիտի չուշանանք այսպէս ընելու:

Ահաւաստիկ մեծ խոստում մը՝ «Ես քեզ պիտի ազատեմ»: Ինչ որ ալ ըլլայ քու դժուարութիւնդ, Աստուծոյ համար բնաւ տարբերութիւն չընեն եւ Անոր քով ոչինչ կայ անկարելի. խոստումը միշտ նոյնն է, ապահով եւ ուրախ ազատութիւն, անձամբ Իր ձեռքով գործուած: Հաւատա՛նք Իրեն ու Ան պիտի պատուէ մեր հաւատքը:

Ահաւաստիկ սքանչելի վերջաւորութիւն մը. «Ի՞նչն զիս պիտի փառաւորես»: Քու ակնկալածէդ շատ աւելի գոհ պիտի մնաս քու աղաղակիդ պատասխանէն ու զի՛նքը պիտի գովես: Ո՛հ, ասիկա ընենք քանի որ վստահ ենք թէ Անիկա հաւատարիմ է Իր խոստումը կատարելու ամէն զնով:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
13.16-43**

Պօղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ որպէսզի լռեն, եւ ըսաւ.- Ո՛վ իսրայէլացիներ եւ աստուածավախ մարդիկ, մտիկ ըրէ՛ք: Այս ժողովուրդին՝ Իսրայէլի Աստուածը ընտրեց մեր հայրերը, բազմացուց մեր ժողովուրդը որ Եգիպտոսի մէջ որպէս պանդուխտ կ'ապրէր, եւ իր մեծ գօրութեամբ զանոնք հոնկէ հանեց: Ծուրջ քառասուն տարի անապատին մէջ կերակրեց զանոնք: Ապա Քանաան երկրի բնակիչ եօթը ազգերը պարտութեան մատնելով, անոնց երկիրը մեր ժողովուրդին տուաւ որպէս ժառանգութիւն: Այս բոլորը եղան մօտաւորապէս չորս հարիւր յիսուն տարիներու ընթացքին: Այնուհետեւ Դատաւորներ տուաւ անոնց, մինչեւ Սամուէլ մարգարէի ժամանակ, երբ մեր ժողովուրդը թագաւոր ուզեց, եւ Աստուած թագաւոր կարգեց Սաւուղը, Կիսի որդին որ Բենիամինի ցեղէն էր, քառասուն տարուան համար: Սաւուղէն ետք անոնց վրայ թագաւոր կարգեց Դաւիթը, որուն մասին նաեւ վկայեց, ըսելով. «Դաւիթը, Յեսսէի որդին, սրտիս խօսող անձն է, որ ամբողջութեամբ իմ կամքս պիտի կատարէ»: Անոր սերունդէն էր որ Աստուած Իսրայէլի տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Բայց նախքան անոր հրապարակ գալը, Յովհաննէս Իսրայէլի ամբողջ ժողովուրդին կը քարոզէր որ ապաշխարեն եւ մկրտուին: Եւ իր պաշտօնը լրացնելու ժամանակ, Յովհաննէս ըսաւ. «Ո՞վ կը կարծէք զիս: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձմէ վերջ կու գայ անիկա, որուն կօշիկները հանելու իսկ արժանի չեմ ես»:

**ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
5.1-14**

Երէցներ, որպէս երիցակից մը որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ այ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ ձեզի. ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէ՛ք ոչ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ յօծաբույթեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց ձեր անձերը պարտադրելով, այլ օրինակ ըլլալով ձեր հօտին. որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք:

Նոյնպէս այ դուք, երիտասարդներ, հնազանդ եղէ՛ք ծերերուն: Բոլորդ այ խոնարհաբար ծառայեցէ՛ք իրարու, որովհետեւ ինչպէս Առակաց Գիրքը կ'ըսէ. «Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ»:

Հետեւաբար Աստուծոյ հօտը ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Զեր բոլոր հոգերը Աստուծոյ ձգեցէ՛ք, որովհետեւ ինքը կը հոգայ ձեր մասին:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՄՆԵՆ: ՄԻՇՏ
ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՄՆԵՆՉ ԿԱՐԴԱՆՔ:**